

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծաղկունքի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու մասին» N 1795-Ն որոշման պահանջները՝ «Ծաղկունք բաց դպրոց» հիմնադրամը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայությանը հանձնելու նպատակով

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Բիծյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ /նախագահ/

Սաֆարյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ

Քոլոզյան Ս. - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ

Հակոբյան Տ. - «Ծաղկունք բաց դպրոց >> հիմնադրամի ժամանակավոր կառավարիչ

Եսայան Ժ. - «Ծաղկունք բաց դպրոց >> հիմնադրամի հաշվապահ

2. Հանձնաժողովին՝ /նախագահ՝ Հ.Բիծյան/

1) պահանջվող տեղեկատվությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն.

2) կատարված աշխատանքների մասին ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլիլայանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ